Առակագրություն

Միջնադարյան առակը արձակ շարադրանքով, գեղարվեստական հորինվածքով, բորոյախրատական բովանդակությամբ փոքրածավալ ստեղծագործություն է: Նրանում իրականությունը պատկերվում է այլաբանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների միջոցով: Հիմնական իմաստը երբեմն բացահայտվում է վերջում՝ սեղմ բարոյախոսական եզրակացությամբ: Առակի մի տարատեսակն է զրույցը, որտեղ գործող անձինք մարդիկ են...

Առակն առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ և ապա անցել գրականությանը՝ որպես փոքրածավալ պատմողական արձակի տեսակ՝ առակագրություն:

Հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը հույն հեղինակ Եզովպոսն է (Ք. ա. 6-րդ դար): Նրա առակների մի մասը դեռևս վաղ միջնադարում թարգմանվել է հայերեն:

Գրիգոր Մագիստրոսը և որոշ այլ հայ հեղինակներ իրենց երկերում մեջբերել են հատուկենտ ժողովրդական առակներ, որոնք, սովորաբար, արհամարհվել ու մերժվել են եկեղեցական մատենագրության մեջ:

12-րդ դարից սկսած, գրականության աշխարհիկացման հետևանքով, ժողովրդական բանահյուսության որոշ տեսակներ արդեն մուտք են գործում գրականության մեջ: Տեսանք, որ դարի մեծագույն հեղինակը՝ Ներսես Շնորհալին, գրականացրել է բանահյուսական ժանր հանդիսացող հանելուկները:

Նույն այդ ժամանակ, ահա, գրականացվում են նաև առակներն ու զրույցները: Առակագրության ասպարեզում հանդես են գալիս երկու խոշոր հեղինակներ՝ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:



ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

(1130 -1213)

Մխիթար Գոշը 12-րդ դարի կրոնական և հասարակական նշանավոր գործիչ է, գիտնական, իրավագետ և օրենսդիր, առակագիր և մանկավարժ:

Մխիթար Գոշի առակներով 12–րդ դարի հայ գրականության մեջ մուտք է գործել ժողովրդական բանարվեստի տեսակը՝ առակը: Նրա իմաստության համբավն այնքան է հռչակվել, որ շատերը հեռավոր վայրերից եկել են աշակերտելու նրան: Նա մեծ հեղինակություն է վայելել ոչ միայն մտավորականների, այլև ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում, եղել է Զաքարե Երկայնաբազուկի խոստովանահայրն ու խորհրդատուն: Միջնադարում նրա մասին պատմվել են ավանդություններ, որոնց մեջ նա սրբացվել է:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մխիթար Գոշը ծնվել է (մոտ 1130 - 1213) Գանձակում: Կրթվել է ծննդավայրում: Ընդունել է կուսակրոնություն և հասել վարդապետի աստիճանի: Ուսումը շարունակելու համար մեկնել է Կիլիկիա և, թաքցնելով վարդապետ լինելը, կատարելագործվում է՝ աշակերտելով Սև լեռան վանքերի երևելի ուսուցչապետներին և վերստին ստանում վարդապետի աստիճան: Այնուհետև գործում է Կարինում, իր ծննդավայր Գանձակում, Խաչենում, ապա Հին Գետիկի վանքում: Նա ձեռք է բերում մեծ գիտնական մանկավարժի համբավ: Շատերը հեռավոր վայրերից գալիս են նրան աշակերտելու: Մեծ հեղինակություն է վայելում նաև ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում:

Երբ երկրաշարժից ավերվում է Հին Գետիկի վանքը, Մխիթար Գոշը Զաքարե և Իվանե Զաքարյան իշխանների օժանդակությամբ ավերված վանքից ոչ հեռու կառուցում է Նոր Գետիկ վանքը, որը հետագայում նրա անունով կոչվում է Գոշավանք: Այստեղ նա բացում է իր դպրոցը՝ ծավալելով մանկավարժական բուռն գործունեություն:

Իր գործունեության և գիտական ժառանգության համար ժամանակակիցներն ու հաջորդները Գոշին մեծարել են՝ կոչելով «Այր իմաստուն ու հեզ», «Մեծ վարդապետ», «Հռչակավոր և մեծիմաստ գիտությամբ»: Իսկ ժողովուրդը նրա մասին հյուսել է ավանդություններ, որոնց մեջ նրան հանդես է բերել սրբի լուսապսակով:

Մխիթար Գոշը գրել է տարբեր բնույթի մոտ մեկ տասնյակ արժեքավոր գործեր՝ մեկնություններ, թուղթ-ուղերձներ, խրատականներ, աղոթքներ: Նրա ամենախոշոր գիտական աշխատանքը «Դատաստանագիրքն» է («Գիրք դատաստանի»), որ քաղաքացիական և եկեղեցական օրենքների մի փայլուն ժողովածու է: Այն ոչ միայն Հայաստանում ու հայկական գաղթավայրերում, այլև մի շարք այլ ժողովուրդների համար եղել է իբրև ժամանակի լավագույն օրենքների ժողովածու: Դեռևս միջնադարում թարգմանվել է լատիներեն, լեհերեն, վրացերեն...

ԳԱՂԱՓԱՐ ԱՌԱԿԻ ՄԱՍԻՆ

Առակ (առ ակն՝ աչքի առաջ)՝ բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Առակի վարպետներ են Եզոպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Իր տեսակի մեջ աննախօրինակ է Մխիթար Գոշի առակների ժողովածուն: Այստեղ ընդգրկված որոշ գործեր ժողովրդական առակների ու զրույցների գրական մշակումներ են, որոշ գործեր փոխառված են Եզովպոսից, մի մասն էլ իր՝ առակագրի ստեղծածն է:

Գոշի անունով հայտնի են շուրջ 190 առակներ: Հեղինակը դրանք դասավորել է ըստ գործող անձերի՝ երկինք, երկիր, երկնային մարմիններ, լեռներ, ջրեր, բույսեր, կենդանիներ, թռչուններ և մարդիկ: Առակները շարադրված են պարզ ու հստակ լեզվով, արտահայտիչ ոճով, սեղմ ու կենդանի երկխոսություններով և առողջ հումորով: Այս հանրամատչելի և հետաքրքրաշարժ ընթերցանության նյութի մատուցումն ունեցել է ուսուցողական նպատակներ: Հեղինակը ձգտել է հող նախապատրաստել իր իրավական ու բարոյական սկզբունքների ու գաղափարների համար:

Կենտրոնացված միապետության պաշտպան Գոշը առակների մեջ ևս այլաբանորեն հաստատել է այն գաղափարը, որ հպատակները պիտի հնազանդ լինեն պետության գլուխ կանգնած թագավորին: Վերջինս էլ պիտի իր հերթին հարգի հպատակների իրավունքները, արդարադատ լինի: Միայն այդ ժամանակ ամուր ու հաստատուն կլինի պետության հիմքը: Հիշենք **«Անհնազանդ ձին»** առակը, որտեղ պատմվում է, թե ինչպես ձին չցանկանալով հնազանդվել տիրոջը՝ փախչում է նրանից: Սակայն հանդիպում է առյուծին, արջին, գայլին և այլ գիշատիչների և նրանցից մի կերպ ազատվելով՝ խոնարհաբար վերադառնում է տիրոջ մոտ՝ քանի որ տերն է ապահովում նրա կյանքի անվտանգությունը:

Մեկ այլ առակում էլ հայտնված է այն միտքը, թե կան տերեր, որոնք ոչ միայն չեն պաշտպանում հպատակներին, այլև հենց իրենք են տանջահարում նրանց: Այդ ժամանակ հպատակներն էլ, հարկ եղած դեպքում, չեն օգնում

իրենց տերերին: Առակի սյուժեն հետևյալն է. Առյուծի ոտքը կոտրվում է, և նա մեղադրում է իր հպատակ կենդանիներին, որ չեն առողջացնում իրեն: Վերջիններս պատասխանում են. «Մենք քեզանից պաշտպանություն չտեսանք ո՛չ արջի ձեռքից, ո՛չ գայլի և ո՛չ էլ այլ գազանների՝ մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ: Մենք Աստծուն պետք է զոհ մատուցենք, որ այդպիսի փորձանքի մեջ գցեց քեզ» (**«Կոտրված ոտքով առյուծը և կենդանիները**»):

Ըստ բարոյախոս-առակագրի՝ թագավորը ոչ թե լոկ խոսքով, այլ իր անձնական օրինակով պիտի խրատի իր հպատակներին: Երբ ձկների թագավորը մեղադրում է իր ստորադասներին, որ ուտում են իրենցից մանր ձկներին, նրանք համարձակվում են ասել. «Քեզանից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրպագելու, և դու, կուլ տալով նրանց, կերակուր ես դարձնում քեզ համար» (**«Ձկները և նրանց թագավորը»):**

«Արջը և մրջյունը» առակում պատկերելով մրջյուններին անխնա խժռող արջին և նրա դեմ միասնաբար պայքարող միջատներին, առակագիրը հանգում է հետևյալ գաղափարին. «Հզորները տկարներին արհամարհում են և չեն վախենում նրանցից, բայց փոքրերը ուժեղանում են իմաստությամբ և հաղթում հզորներին»:

Մեկ այլ առակի եզրահանգման մեջ էլ ասում է, թե պետք է «կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք»:

Ազատագրական պայքարի ելած իր ժողովրդի մարտական ոգին բարձր պահելու համար Գոշն առաջ է քաշել այն գաղափարը, թե խաղաղությունն անվտանգ պահելու համար պետք է մարտնչել (**«Քահանան և ավազակը»**):

Նշանավոր է նաև «**Ոսկին և ցորենը»** առակը: Այստեղ առակագիրը հաստատել է այն ճշմարտությունը, որ աշխարհը կերակրող Ցորենն ավելի բարձր է ու կարևոր թագավոր Ոսկուց:

Առակների միջոցով Գոշը ձգտել է նաև ժողովրդի մեջ տարածել իր բարձր բարոյախոսական գաղափարները, դրվատել առաքինությունները, ծաղրել արատները, անմտությունը, խարազանել չարիքը: Երբ անմիտ մարդը չհավանելով հունապի ծառի տեսքը՝ կտրում է այն, ծառը զայրանալով ասում է. «Ո՜վ անմիտ, ծառը իր պտղից պետք է ճանաչել, ոչ թե տեսքից» (**«Անմիտ մարդը և հունապի ծառը»):** Բուն իմաստն է՝ մարդը գնահատելի է ոչ թե արտաքին տեսքով, այլ կատարած գործերով:

«Աստղերը» առակում այլաբանորեն հայտնվում է այն գաղափարը, որ պիտի ճանաչել սեփական հնարավարության սահմանները: Աստղերը հավաքվելով՝ որոշում են՝ քանի որ իրենք շատ են, ուստի կարող են արևի ու լուսնի փոխարեն

լուսավորել ցերեկն ու գիշերը: Եվ որոշում են նախ հալածել ու փախցնել արեգակին: Բայց երբ ծագում է լուսինը, խամրելով նրա լույսից՝ աստղերը խոստովանելով իրենց պարտությունը՝ ասում են. «Եթե մենք լուսնի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արևը ծագի»:

Գոշի առակներում արտացոլում են գտել ժամանակի հասարակության կենցաղը, սոցիալական պայմանները, մարդկային հարաբերությունները, հանդես են բերված ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչները (գեղջուկ, քաղաքաբնակ, ազնվական, արհեստավոր, կրոնավոր): Այս ամենը նորություն էր հայ գրականության մեջ:

Իրենց գրական և ճանաչողական մեծ արժեքի համար Մխիթար Գոշի առակները բարձր են գնահատել հայ և օտար ուսումնասիրողները. նրան համեմատել են առակագիրներից խոշորագույնի՝ Եզոպոսի հետ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է առակը:
2. Ի՞նչ ճանապարհ է անցել առակը, ինչպե՞ս է դարձել գրական ժանր:
3. Ի՞նչ դեր է կատարել Մխիթար Գոշը հայ միջնադարյան առակագրության մեջ:
4. Ներկայացրեք Մխիթար Գոշի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:
5. Կազմեք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
6. Ստեղծագործաբար վերաշարադրեք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:
7. Առակների բովանդակությունը ներկայացրեք նկարներով:
8. Համեմատեք և համադրեք առակների կերպարները և իրական կյանքում հանդիպող մարդկանց՝ բերելով օրինակներ:
9. Ստեղծագործաբար վերաշարադրեք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:
10. Որևէ առակի բարոյախոսությունն օգտագործեք որպես շարադրանքի վերնագիր և գրեք շարադրություն:
11. Հիմնավորեք առակների արդիականությունը տարածության և ժամանակի մեջ՝ բերելով օրինակներ:
12. Ներկայացրեք Մխիթար Գոշի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:
13. Կատարեք բառային և բառարանային աշխատանք՝ նոր սովորած բառերը գործածելով նախադասությունների մեջ:

Մեծերը Գոշի մասին

Գոշը հայկական վերածնունդի հիմնական ներկայացուցիչներից մեկն է:

Ամերիկյան հանրագիտարան

Գոշը համեմատվում է հայտնի առակագիրներ Եզոպոսի և Լաֆոնտենի հետ:

Բրիտանացի մտավորական Դեյվիդ Լենգ